դեմ հանդիման կանգնեց ժամանակի հզոր կայսրությանը՝ Օսմանյան Թուրքիային, որը, թեև սուլթան Բայազիդի (1481—1512) օրոք հաշտ աչքով էր նայում նորակազմ պետության հաջողություններին և նույնիսկ պաշտոնապես ճանաչել էր Իսմայիլի թագադրությունը, սակայն նրա հաջորդ՝ սուլթան Սելիմի ժամանակ (1512—1520) հալածելով իր սահմաններում ապրող շիաներին՝ խիստ թշնամական դիրք բռնեց շահ Իսմայիլի նկատմամբ։

Սելիմի օրոք ծայր առան և հետզհետե մեծ ծավալ ընդունեցին թուրքիրանական ավերիչ պատերազմները, որոնք մղվում էին մերթ Հայկական բարձրավանդակին, մերթ Անդրկովկասին, Ատրպատականին ու Միջագետքին տիրելու համար և կարճատև ընդմիջումներով շարունակվեցին մինչև XVII դ. 30-ական թվականները։

Թուրք-պարսկական կռիվների ընթացքում Արարատյան երկիրն ու նրա կենտրոն Երևանը բազմիցս ավերվել են ու ամայացել, կործանվել են քաղաքներ ու շեներ, հրկիզվել գյուղեր ու ավաններ, երկիրը ձեռքից ձեռք է անցել, հաճախակի փոփոխության են ենթարկվել նրա սահմաններն ու ներքին վարչական բաժանումը։

1512—1514 թթ. ծավալված ռազմական գործողություններն ավարտվեցին երկու տերությունների միջև 1515 թ. կնքված պայմանագրով, որով ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Հյուսիսային Միջագետքն անցնում էին Թուրքիային։ Պետական սահմանների այսպիսի փոփոխության հետևանքով Արևմտյան Հայաստանում բնակչության նշանակալից տեղաշարժեր կատարվեցին։ Քրդական տարրը սկսեց կայուն բնակություն հաստատել Պատմական Հայաստանի նաև կենտրոնական նահանգներում։

Սուլթան Սելիմը ի դեմս քրդական աշիրաթների տեսնում էր մի ուժ, որը կոչված էր կարևոր դեր խաղալու Օսմանյան կայսրության արևելյան սահմանների պաշտպանության գործում։ Օգտագործելով դավանակցության փաստը, նա առաջ քաշեց և սիրաշահեց այդ ցեղերի ամիրներին, որոնցից այդ ժամանակ առավել հայտնի էր և մյուս աշիրաթների մեջ ևս լայն ժողովրդականություն էր վայելում, Բաղեշի Ռոժակի մեծ ցեղից Մոլլա Իդրիս Բիթլիսին։

Շարաֆ խան Բիթլիսիի վկայությամբ՝ այս տարիներին «բազմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարղինի կողմերում, գնացին բնակություն հաստատելու կըզըլբաշներից գրավված վայրերում, միաժամանակ հանձն առնելով պաշտպանել սահմանները։ Այդ աշիրաթների պարագլուխները կարևոր պաշտոններ՝ ղիամեթներ, ալայբեկիներ և սանջաքներ ստացան»[2]։ Շարաֆ խանը հատկապես հիշում է Բեսյան ցեղի առաջնորդ Շահսուվար բեկին, որին վստահված էր «Երևանի վիլայեթի Բայազետի բերդի պաշտպանությունը»[3]։

Այսպիսով, Արարատյան երկիրը կամ Չուխուր-Սա'դի վիլայեթը, որը XV դ. Կարակոյունլուների և Աղկոյունլուների տերության կազմում ընդգրկում էր Պատմական Հայաստանի համարյա ամբողջ Այրարատ նահանգը՝

---

[2] Schéref-nameh ou Histoire des Kourdes, par Schéref, prince de Bidlis, publiée par V. Veliaminof-Zernof, SPB, 1860, t. I (պարսկ. բնագիր), էջ 269—270 (այսուհետև՝ Schéref-nameh).

[3] Նույն տեղում։